ՀՀ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ՝ ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2023.1-79

Հիմնաբառեր. *ռուս-ուկրաինական պատերազմ, ծառայությունների առևտուր, ճանապարհորդություններ, ֆինանսական ծառայություններ*



Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առայսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

ORCID - https://orcid.org/0000-0001-7669-8626

Արևմտյան զարգացած երկրների կողմից Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումը, որը ենթադրում է ապրանքների և ծառայությունների, տեխնոլոգիական, ֆինանսական գլոբալ շուկաներին հասանելիության սահմանափակում, փոխել է միջազգային տնտեսական համակարգը ամբողջապես:

Ռուս-ուկրաինական պատերազմը զգալիորեն անդրադարձել է ծառայությունների առևտրի վրա: Այս իրավիճակը չէր կարող շրջանցել ՀՀ ծառայությունների ոլորտը: Պատերազմը ՀՀ ծառայությունների առևտրի վրա ազդել է մի քանի ուղղություններով՝ զբոսաշրջություն, ֆինանսական ոլորտ, տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաներ: 2022 թ. հունվար-սեպտեմբերին աճ է գրանցվել ծառայությունների արտահանման գրեթե բոլոր բնագավառներում, շեշտակիորեն աճել է ֆինանսական, զբոսաշրջային ծառայությունների արտահանումը:

Ռուս-ուկրաինական պատերազմը վերափոխեց համաշխարհային տնտեսությունն ամբողջապես: Այն մի կողմից հանգեցրեց մատակարարումների շղթաների ընդհատմանը և մի շարք, այդ թվում՝ առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների մատակարարումների խաթարմանը, իսկ մյուս կողմից՝ համաշխարհային առևտրային հոսքերի ուղղությունների փոփոխությանը: Արևմտյան զարգացած երկրները սկսեցին Ռուսաստանի նկատմամբ կիրառել պատժամիջոցներ, որոնք արտահայտվում են վերջինիս հետ կապերի խզմամբ: Ռուսական արտադրանքից հրաժարման և բազմաթիվ վերազգային կորպորացիաների՝

Ռուսաստանը լքելու հետևանքով համաշխարհային առևտրային հոսքերն էական փոփոխություններ են կրել: Համաշխարհային առևտուրը վերածևավորվել է՝ հարմարվելով նոր իրավիճակին: Ներկայում արևմտյան երկրները շարունակում են սահմանափակումների նոր փաթեթներ ներկայացնել, ինչից կարելի է ենթադրել, որ համաշխարհային առևտրային հոսքերի ուղղությունները շարունակաբար փոփոխության են ենթարկվելու:

Ծառայությունների մի շարք ուղղություններ զգալիորեն տուժել էին կորոնավիրուսի համավարակի սահմանափակումներից: 2021 թ.-ը կարելի է համարել հետհամավարակային վերականգնման փուլ, երբ ծառայությունների համաշխարհային առևտուրը նախորդ տարվա համեմատ ավելացավ 17%-ով՝ գրեթե հասնելով 2019 թ. մակարդակին[1]՝ համակարգչային, հեռահաղորդակցության, տեղեկատվական ծառայությունների, ինչպես նաև բեռնափոխադրումների աճի արդյունքում: Իսկ ճանապարհորդությունները դեռևս շարունակում էին կրճատման միտում ցուցաբերել: 2022 թ. երկրորդ եռամսյակում արդեն գրեթե ամբողջությամբ վերականգնվեցին նաև զբոսաշրջային հոսքերն աշխարհում: Չնայած ռուս-ուկրաինական պատերազմին՝ կանխատեսվում է, որ 2022 թ. համաշխարհային առևտուրը կհասնի ռեկորդային մակարդակի՝ 32 տլն ԱՄՆ դոլար: Եթե ապրանքների առևտուրն ավելացել է 10%-ով՝ մասամբ պայմանավորված էներգակիրների գների աճով, ապա ծառայությունների համաշխարհային առևտուրն աճել է 15%-ով՝ հասնելով ռեկորդային՝ 7 տլն ԱՄՆ դոլար մակարդակի[2]: Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներն ընդգրկում են նաև ծառայությունների ոլորտը[3], այդ թվում՝ բարձր տեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների արտահանում, ավիահաղորդակցության դադարեցում, ճանապարհորդությունների սահմանափակումներ և այլն: Պատերազմը փոխել է ծառայությունների առևտրի ուղղությունները, ինչը չէր կարող չանդրադառնալ Հայաստանի ծառայությունների առևտրի հոսքերի վրա: ՀՀ ծառայությունների առևտրի վրա ազդեցությունը նկատվում է մի քանի ուղղություններով՝ զբոսաշրջություն, ֆինանսական ծառայություններ, տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաներ:

Դիտարկենք, թե ինչ փոփոխություններ է կրել ծառայությունների ոլորտը 2022 թ.-ին: Համաձայն ՀՀ վճարային հաշվեկշռի՝ առաջին երեք եռամսյակում գրանցվել է թե՛ արտահանման, թե՛ ներմուծման աճ: Հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում ծառայությունների արտահանման ծավալները կազմել են 2.8 մլրդ ԱՄՆ դոլար, այսինքն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել 133.4%-ով, ներմուծումը կազմել է 1,7 մլրդ ԱՄՆ դոլար՝ աճելով 92,5%-ով[4]: Ծառայությունների առևտրի դրական հաշվեկշիռը կազմել է 1,1 մլրդ ԱՄՆ դոլար: Նախորդ տարի ծառայությունների առևտուրն էական աճ էր գրանցել COVID-19 համավարակից հետո վերականգնման համատեքստում: Մասնավորապես՝ 2021 թ. հունվար-սեպտեմբերին արտահանումն աճել էր 45,6%-ով, իսկ ներմուծումը՝ 20,3%-ով: Այնուամենայնիվ, այն դեռևս հետ էր մնում 2019 թ. նախահամավարակային ծավալներից: 2022 թ. նույն ժամանակահատվածում ծառայությունների առևտուրը գերազանցել է 2019 թ. ցուցանիշները: Ավելին, արտահանումը գերազանցել է 2019 թ. մակարդակը 1,6 անգամ:

Ծառայությունների արտահանման 60%-ը բաժին է ընկել ճանապարհորդություններին: Ճանապարհորդական ծառայությունների արտահանումը, որը ներկայացնում է զբոսաշրջությունից ստացվող եկամուտները, 2022 թ. հունվար-սեպտեմբերին հասել է ռեկորդային մակարդակի՝ 1,7 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ

[1] International Trade In Services 2021, https://unctad.org/system/files/official-document/statinf2022d2_en.pdf
[2] Global trade set to hit record $32 trillion in 2022, but outlook increasingly gloomy for 2023, (13 December 2022), https://unctad.org/news/global-trade-set-hit-record-32-trillion-2022-outlook-increasingly-gloomy-2023
[3] Statutory guidance: Russia sanctions: guidance, https://www.gov.uk/government/publications/russia-sanctions-guidance/russia-sanctions-guidance
[4] ՀՀ կենտրոնական բանկ, https://www.cba.am/am/SitePages/Default.aspx

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ ծառայությունների արտահանումը, 2021 թ. հունվար-սեպտեմբեր, 2022 թ. հունվար-սեպտեմբեր[5]

Արտահանում	2021 հունվար-սեպտեմբեր	2022 հունվար-սեպտեմբեր
Ճանապարհորդություն	536.8	1723.0
Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ	268.5	442.1
Տրանսպորտ	217.2	359.4
Շինարարություն	66.2	78.6
Այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման ծառայություններ	30.3	67.9
Այլ գործնական ծառայություններ	25.2	45.1
Ֆինանսական ծառայություններ	10.3	44.3
Ապահովագրություն և կենսաթոշակային ծառայություններ	24.9	40.0
Պետական ապրանքներ և ծառայություններ	29.1	33.7
Անձնական, մշակութային և զվարճանքի ծառայություններ	8.1	8.3
Տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ	2.5	2.5

ավելանալով 3,2 անգամ: Մինչ այդ՝ ճանապարհորդությունների արտահանման ամենամեծ ծավալն արձանագրվել է 2019 թ., երբ տարեկան արտահանումը կազմել է 1,5 մլրդ ԱՄՆ դոլար: Զբոսաշրջային ծառայությունների արտահանման ծավալների այսպիսի կտրուկ աճը պայմանավորված է ռուսաստանցի զբոսաշրջիկների մեծ հոսքով, թեև որոշակի դեր է խաղացել նաև համավարակի հետ կապված սահմանափակումների վերացումը:

Արևմտյան (Եվրամիության երկրներ, ԱՄՆ և Կանադա), մասնավորապես՝ եվրոպական մի շարք երկրների կողմից Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումը, այդ թվում՝ ՌԴ քաղաքացիներին վիզայի տրամադրման դադարեցումը կամ այդ գործընթացի բարդացումը, դրա հետ մեկտեղ, օդային հաղորդակցության դադարեցումը հանգեցրել են ռուս զբոսաշրջիկների հոսքի ակտիվացմանը դեպի Ռուսաստանի հանդեպ «բարյացակամորեն» տրամադրված այլ երկրներ, այդ թվում՝ Հայաստան[6]: Համաձայն Զբոսաշրջության կոմիտեի տվյալների՝ 2022 թ.-ի ընթացքում մեր երկիր է այցելել 1,67 մլն զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա 870 հազարի փոխարեն: Ընդ որում, զբոսաշրջային այցելությունների թվով առաջատար են Ռուսաստանը, Վրաստանը, Իրանը, ԱՄՆ-ն և Գերմանիան: Զբոսաշրջիկների գրեթե կեսը եկել է Ռուսաստանից (47,3%):

Այս հատվածին հետևում է հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայությունների արտահանումը, որի ծավալը դիտարկվող ժամանակահատվածում կազմել է 442,1 մլն ԱՄՆ դոլար: Ավանդաբար, մինչև 2020 թ.՝ ծառայությունների արտահանման երկրորդ խոշոր հատվածը եղել է տրանսպորտը: Ընդ որում, եթե տրանսպորտային ծառայությունների արտահանումը 2020 թ. որոշակի անկում է գրանցել, այնուհետև վերականգնվել, ապա համակարգչային ծառայություններինը 2012 թ.-ից ի վեր անշեղորեն աճում է: Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայությունների արտահանումը 2022 թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 442,1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 64,6%-ով: Տրանսպորտային ծա-

[5] Ազգային վիճակագրական կոմիտե:
[6] Бегство от санкций. В какие страны все еще ездят россияне после изоляции в Европе, https://www.rbc.ua/ukr/travel/vtecha-vid-sanktsiy-kih-krayin-shche-yizdyat-1673444091.html

ռայությունների արտահանումը դիտարկվող ժամանակահատվածում 359.4 մլն ԱՄՆ դոլար է՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 65,4%-ով (217.2 մլն ԱՄՆ դոլարով): Այս առումով, հարկ է նշել, որ ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով Ռուսաստանից Հայաստան են տեղափոխվել բազմաթիվ ընկերություններ, մասնավորապես՝ Հայաստանի ՏՏ ծառայությունների ոլորտի 20 խոշորագույն գործատուներից 5-ը այդպիսի ընկերություններ են[7]:

Հաջորդ խոշոր հատվածը շինարարությունն է: Արտասահմանում մատուցվող շինարարական ծառայությունների ծավալը 78,6 մլն ԱՄՆ դոլար է, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 18,8 %-ով ավելի է:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, դիտարկվող ժամանակահատվածում ծառայությունների արտահանման շեշտակի աճ է արձանագրվել գրեթե բոլոր ուղղություններում, բացառությամբ տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների, որոնց ծավալն աննշան կրճատվել է՝ 0,9 %: Հարկ է նաև ընդգծել, որ այս տիպի ծառայությունների արտահանումը նշանակալի ծավալ չունի՝ 2,5 մլն ԱՄՆ դոլար:

Արտահանման ամենամեծ աճը գրանցել է ֆինանսական ծառայությունները: Վերջինս ներառում է ֆինանսական միջնորդական և օժանդակ ծառայությունները, որոնք սովորաբար տրամադրվում են բանկերի և ֆինանսական կորպորացիաների կողմից ոչ ռեզիդենտներին: Այդ ծառայություններն ընդգրկում են ավանդների ընդունումն ու վարկերի տրամադրումը, բանկային քարտերի սպասարկումը, ֆինանսական լիզինգի, ֆակտորինգի միջնորդավճարները, գանձումները և այլն[8]: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ (10,3 մլն ԱՄՆ դոլար) ֆինանսական ծառայությունների արտա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Ծառայությունների արտահանման փոփոխությունը 2022 թ. հունվար-սեպտեմբերին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ[9]

[7] Հայաստանի ՏՏ ոլորտի համայնապատկերը փոխվել է, 12-ը սեպտեմբերի, 2022, https://modex.am/it-in-armenia-2022/
[8] International Monetary Fund: Balance of Payments Statistics: Introductory Notes, as of November 2020, page 32.
[9] Ազգային վիճակագրական կոմիտե:

հանումն ավելացել է 330,2%-ով՝ կազմելով 44,3 մլն ԱՄՆ դոլար, ինչը պայմանավորված է Ռուսաստանի ռեզիդենտներին տրամադրվող ֆինանսական ծառայությունների աննախադեպ ծավալներով: Բավական է նշել, որ ՀՀ առևտրային բանկերում ոչ ռեզիդենտ հաճախորդների հաշիվների քանակը 2022 թ. նոյեմբերին, փետրվարի համեմատ, ավելացել է 10 անգամ՝ հասնելով 100 000-ի[10]: Visa և Mastercard միջազգային վճարային համակարգերի Ռուսաստանից հեռանալու համատեքստում՝ Հայաստանի բանկերը 2022 թվականի երեք եռամսյակում քարտերի քանակն ավելացրել են 18,7%-ով՝ 2021 թվականի ինն ամիսների 6,62% աճի դիմաց[11]:

Հաջորդ ամենամեծ աճ արձանագրած ճյուղը ճանապարհորդություններն են, որոնց արտահանման ծավալը 2022 թ. հունվար-սեպտեմբերին ավելացել է 221%-ով՝ 536.8 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 1,7 մլրդ ԱՄՆ դոլարի:

Զգալի աճ է արձանագրվել այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման (124.3%), այլ գործնական (79,2%), տրանսպորտային (65,4%), հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական (64,6%), ապահովագրության և կենսաթոշակային (60,6%) ծառայությունների արտահանման ոլորտում: Որոշ չափով աճել է շինարարական ծառայությունների արտահանումը (18.8%), որը դեռևս հետ է մնում 2019 թ. մակարդակից: Հայելային վիճակագրությունը (ծառայությունների արտահանման տվյալներն ըստ երկրների բացակայում են) ցույց է տալիս, որ 2019 թ. ՀՀ շինարարական ծառայությունների արտահանման 43,8%-ը բաժին է ընկել Ռուսաստանին, ինչից կարելի է ենթադրել, որ վերջինիս արտահանման ծավալների վերականգնման ցածր տեմպերի վրա կարող են ազդել նաև Ռուսաստանի տնտեսական դժվարությունները:

Ծառայությունների ներմուծման խոշորագույն ուղղությունները ճանապարհորդություններն ու տրանսպորտային ծառա-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՀՀ ծառայությունների ներմուծումը, 2021 թ. հունվար-սեպտեմբեր, 2022 թ. հունվար-սեպտեմբեր[12]

	2021 հունվար-սեպտեմբեր	2022 հունվար-սեպտեմբեր	Աճը, %
Ճանապարհորդություն	323.1	903.6	179.6%
Պետական ապրանքներ և ծառայություններ	15.2	28.0	84.2%
Ապահովագրություն և կենսաթոշակային ծառայություններ	48.3	78.4	62.4%
Ֆինանսական ծառայություններ	15.1	23.8	57.0%
Տրանսպորտ	338.7	510.4	50.7%
Այլ գործնական ծառայություններ	73.8	107.1	45.1%
Անձնական, մշակութային և զվարճանքի ծառայություններ	18.5	26.1	40.9%
Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ	30.8	40.2	30.6%
Այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման ծառայություններ	0.0	0.0	0.0%
Շինարարություն	26.5	20.6	-22.4%
Տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ	20.6	14.6	-28.9%

[10] ՀՀ ԿԲ նախագահ. պատժամիջոցների ռիսկերը կառավարվել են բարձր որակով և արդյունավետ, 29.12.2022, https://banks.am/am/news/newsfeed/25138

[11] RBC. Բանկային քարտերի թվի ռեկորդային աճ՝ մերձավոր արտասահմանի երկրներում, 9.02.2023, https://banks.am/am/news/newsfeed/25397

[12] Ազգային վիճակագրական կոմիտե:

յություններն են, որոնց բաժին է ընկնում ներմուծման 80.7%-ը: Դիտարկվող ժամանակահատվածում զբոսաշրջային ծառայությունների ներմուծման ծավալը կազմել է 903,6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 2,8 անգամ: Տրանսպորտային ծառայությունների ներմուծումը կազմել է 510.4 մլն ԱՄՆ դոլար, որը 50.7%-ով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից:

Ծառայությունների ներմուծման ուղղություններում, բացառությամբ շինարարության ու տեխնիկական սպասարկման և վերանորոգման ոլորտների, աճ է գրանցվել: Շինարարական, ինչպես նաև տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների ներմուծումը կրճատվել է գրեթե 22.4%-ով:

Ամփոփելով նշենք, որ, ընդհանուր առմամբ, Հայաստանը կարողացել է օգտագործել ստեղծված իրավիճակի հնարավորությունները՝ ապահովելով զբոսաշրջիկների մեծ ներհոսք, ֆինանսական, հեռահաղորդակցության, համակարգչային ծառայությունների արտահանման ծավալների ընդլայնում: Այնուամենայնիվ, այսպիսի աճը ռիսկեր է պարունակում, քանի որ կապված է արտաքին գործոնների հետ, որոնք կարող են արագորեն փոփոխվել: Հետևապես՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված ռեսուրսների ներհոսքը կայուն դարձնելու ուղղությամբ, մասնավորապես՝ պայմաններ ստեղծել ինչպես ռուսաստանյան ձեռնարկությունները, այնպես էլ ռուսաստանցի մասնագետներին Հայաստանում պահելու համար՝ օգտագործելով բարենպաստիրավիճակը տնտեսության առանցքային ճյուղերի զարգացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԿԲ նախագահ. պատժամիջոցների ռիսկերը կառավարվել են բարձր որակով և արդյունավետ, 29.12.2022, https://banks.am/am/news/newsfeed/25138
2. RBC. Բանկային քարտերի թվի ռեկորդային աճ՝ մերձավոր արտասահմանի երկրներում, 9.02.2023, https://banks.am/am/news/newsfeed/25397
3. Հայաստանի SS ոլորտի համայնապատկերը փոխվել է, 12-ը սեպտեմբերի, 2022, https://modex.am/it-in-armenia-2022/
4. ՀՀ կենտրոնական բանկ, https://www.cba.am/am/SitePages/Default.aspx
5. Бегство от санкций. В какие страны все еще ездят россияне после изоляции в Европе, https://www.rbc.ua/ukr/travel/vtecha-vid-sanktsiykih-krayin-shche-yizdyat-1673444091.html
6. Global trade set to hit record $32 trillion in 2022, but outlook increasingly gloomy for 2023, (13 December 2022), https://unctad.org/news/global-trade-set-hit-record-32-trillion-2022-outlook-increasingly-gloomy-2023
7. Statutory guidance: Russia sanctions: guidance, https://www.gov.uk/government/publications/russia-sanctions-guidance/russia-sanctions-guidance
8. International Monetary Fund: Balance of Payments Statistics: Introductory Notes, as of November 2020, page 32
9. International Trade in Services 2021, https://unctad.org/system/files/official-document/statinf2022d2_en.pdf

Шушан МОВСИСЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ТОРГОВЛЯ УСЛУГАМИ АРМЕНИИ В КОНТЕКСТЕ РОССИЙСКО-УКРАИНСКОЙ ВОЙНЫ

Введённые западными развитыми странами против России санкций, предполагающих ограничение доступа к мировым рынкам товаров, услуг, технологий и финансов, изменило международную экономическую систему в целом. Российско-украинская война также оказала значительное влияние на торговлю услугами. Эта ситуация не могла не сказаться на торговле услугами Армении. Война затронула торговлю услугами РА по нескольким направлениям: туризм, финансовые услуги, информационные и коммуникационные технологии. За первые три квартала 2022 года зафиксирован рост практически по всем направлениям экспорта услуг. В значительной степени увеличился экспорт финансовых и туристических услуг.

Ключевые слова: *российско-украинская война, торговля услугами, путешествия, финансовые услуги*

Shushan MOVSISYAN
Expert at "Amberd" Research Center, ASUE

ARMENIA AND WORLD

TRADE IN SERVICES OF ARMENIA IN THE CONTEXT OF THE RUSSIAN-UKRAINIAN WAR

Sanctions imposed against Russia by Western developed countriesimplying the limitation of Russia's access to the global markets of goods and services, technology and finance are drastically changing the international economic system. The Russian-Ukrainian war has had a significant impact on trade in services as well. The situation has affected the trade flows of services in Armenia as well. The war affected trade in services of the RA in several directions: tourism, financial services, information and communication technologies. In the first three quarters of 2022, an increase was recorded in almost all directions of export of services. Further, the export of financial and tourist services increased considerably.

Keywords: *Russian-Ukrainian war, trade of services, travel, financial services*